ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Արամայիս Բիլյանից

Ք.Երևան,Վ.Վաղարշյան փողոց,21/1շենք,42բն.
Հեռ. բջջ. 091 40 76 25
Էլ.փոստ anna.bilyan@mail.ru

Մսամթերք արտադրողների միություն
իրավաբանական անձանց միություն
Պետ.գրանցման համարը 290 151 838522

Դ Ի Մ Ո Ի Մ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ Մսամթերք արտադրողների միության ԻԱՄ ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կանոնադ.պետական գրանցման համարը-290 151 838 522
2. Անդամագրի ցանկ՝ [illegible]

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է,որը մշակում և իրականացնում է գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության նպատակներից ու խնդիրներից է՝

ա)ագրոպարենային ոլորտում Հայաստանի հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության մշակումը և իրականացումը:

բ)գիտատեխնիկական միասնական քաղաքականության հիման վրա ՀՀ գյուղատնտեսության ներուժի օգտագործման միջոցով գյուղատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման ապահովումը:

գ)շուկայական հարաբերությունների ձևավորման և համապատասխան ենթակառուցվածքների զարգացման գործընթացին աջակցությունը , մասնակցությունը պարենային ապահովության քաղաքականության մշակմանը և իրականացմանը:

Բուսաբուծություն

2014 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 332.7 հազ. հա, նախորդ տարվա 318.1 հազ. հա-ի դիմաց կամ ցանքատարածություններն ավելացել են 14.6 հազ. հա-ով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 605.73 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6,9 %-ով:

2014 թվականին գրանցվել է գրեթե բոլոր (բացառությամբ պտղի, որը հետևանք էր աննախադեպ ցրտահարության պատճառած կորուստների) մշակաբույսերի համախառն արտադրանքի աճ: Առավել մեծ աճ է ապահովվել հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի, մասնավորապես ցորենի արտադրության բնագավառում:

Անասնապահություն

2014 թվականին արձանագրվել է կենդանական ծագման մթերքների արտադրության նկատելի աճ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականին անաս-նապահության համախառն արտադրանքը կազմել է 387.64 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 7.8 %-ով:

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները

Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք

Սննդի արդյունաբերություն

Հայաստանի սննդի արդյունաբերությունը դեռևս խորհրդային շրջանից սկսած և այժմ էլ համարվում է երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը, որը շատ է կարևորվում նաև գյուղական բնակչության զբաղվածության ու եկամուտների ապահովման առումով և նպաստում է երկրի պարենային ու տնտեսական անվտանգության և ագրոպարենային շուկայի ձևավորմանը, ինչպես նաև ապահովում է ազգաբնակչությանն անվտանգ, որակյալ մթերքների երաշխավորված ու կայուն մատակարարումը:

Վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտահանման ծավալների աստիճանական ավելացումն որոշակիորեն նպաստել է գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետությունում այսօրվա դրությամբ գործում են շուրջ 1600 սննդամթերքի արտադրության ձեռնարկություն:

Վերջին երեք տարիների միջին տվյալներով ոլորտին բաժին է ընկնում երկրի համախառն ներքին արդյունքի շուրջ 6 %-ը և բացառիկ տեղ ունի երկրի բնակչության պարենային ապահովության գործում:

Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը 2014թ. կազմել է 38.4%, իսկ մշակող արդյունաբերության՝ 58.6%: 2013 թվականին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 35.3 և 56.5%:

Հայաստանի սննդի արդյունաբերության ոլորտն ունի նաև արտահանման միտվածություն: Արտահանման ծավալներում մեծ բաժին են կազմում հատկապես գինեգործական արտադրանքը, պտուղբանջարեղենային պահածոները և հյութերը, խմելու և հանքային ջրերը, գարեջուրը և այլն: ՀՀ կառավարությունը որդեգրել է արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 49 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ,ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը, որի առաջնային ոլորտների շարքում ընդգրկվել են նաև կոնյակագործությունը, գինեգործությունը, պտուղբանջարեղենային պահածոների, հյութերի և չորացված մթերքի, ինչպես

սարքավորումներ ու հոսքային գծեր, ինչպես նաև որակի և անվտանգության կառավարման ԻՍՕ 9000 շարքի, ԻՍՕ 22000 կամ HACCP համակարգեր:

Արտադրվում են մսամթերքի և երշիկեղենի ավելի քան 80 տեսականիներ, որոնք իրացվում են հանրապետության ներսում, կան նաև փոքր ծավալներով արտահանումներ Վրաստան և ԱՊՀ այլ երկրներ:

Չնայած արտահանման փոքր ծավալներին մսամթերքը և երշիկեղենն ունեն արտահանման մեծ ներուժ: Արտահանման արձանագրված փոքր ծավալները պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տարիներին Հայկական արտադրանքի արտահանման և իրացման հիմնական շուկայում՝ ՌԴ-ում արգելված էր հայկական ծագման մսամթերքի և երշիկեղենի ներմուծումը: Այժմ այդ արգելքը վերացվել է և հնարավորություններ են ստեղծվել ՌԴ արտահանումների համար:

Հանրապետությունում երշիկեղենը հիմնականում արտադրվում է Հնդկաստանից, Բրազիլիայից, Արգենտինայից, Ավստրալիայից, Կանադայից, Իտալիայից և այլ երկրներից ներմուծված սառեցրած մսով, չնայած վերջին տարիներին նկատվում է նաև տեղական թարմ մսով երշիկեղենի արտադրության միտում, մասնավորապես՝ 2014 թվականին արտադրված երշիկեղենի ընդհանուր ծավալի շուրջ 10%-ը արտադրվել է տեղական թարմ մսով:

Յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության այնպիսի մակարդակ, որն երաշխավորում է բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը: Սննդամթերքի ֆիզիկական մատչելիությունը բնակչության գնողունակ պահանջարկը բավարարող ծավալներով սննդամթերքի առաջարկի ապահովումն է: Սննդամթերքի տնտեսական մատչելիությունը բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակ է, որն ապահովում է բնակչության կողմից սննդամթերքի ձեռքբերման հնարավորություն ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան: Երկրի պարենային անվտանգության բնորոշման համար առավել կարևոր ցուցանիշ է պարենամթերքի ինքնաբավության մակարդակը:

<u>Ագրոպարենային ոլորտի արտաքին առևտուրը</u>

2014 թվականի արտաքին ապրանքաշրջանառության մեջ գյուղատնտեսական ծագման

հավանականությունը, քանի որ այս սննդամթերքում ավելի քիչ կարելի է հանդիպել վնասակար միկրոօրգանիզմներ: Օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեծ կարևորություն ունի էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության համար, որին նպաստում է նաև պահանջարկի աճը:

ՄՍԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ ԻԱՄ

ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԲԻԼՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջզործարանային կապերի և ներքին ճյուղավորումների դեզինտեգրացիայի բացակայությունը հայրենական մսամթերք արտադրողների առջև անհրաժեշտություն դրեց ստեղծել Հայկական մսամթերք արտադրողների միություն:

Միությունը միավորում է մսամթերքներ արտադրող 16 ընկերություն: Կազմակերպչական աշխատանքների ընթացքում հնարավորություն ունեցա շատ զրուցել մսավերամշակման ձեռնարկատիրությունների ղեկավարների հետ: Նրանք բոլորը համոզված են, որ ցավագին հարցերը, որոնք ի զորու չէ լուծել առանձին արտադրությունը, կարող են լուծել ընդհանուր ուժերով:

Մենք ունենք շատ ընդհանուր խնդիրներ՝ սկսած հումքի ձեռք բերումից մինչև ելք նոր իրացման շուկաներ: Ցավոք, Հայաստանում վաղուց հաստատվել է հումքի ներդրման մենաշնորհ: Մսի, խոզի ճարպի, բնական և արհեստական թաղանթների, համեմունքների արտահանմամբ զբաղվում են մի քանի ընկերություններ, որոնք էլ թելադրում են մեզ իրենց գները: Շատ հաճախ, սեփական եկամտով շահագրգռված, նրանք բերում են հումք, որը որակով ամենան է ստորի չի ընկնում և գրպանի թանկն գներով վաճառում են մեզ: Իսկ

Հարկ է նշել, որ Հայաստանը երբեք չի կարողացել լիարժեռ կերպով բավարարել իր մսի պահանջը, այդ իսկ պատճառով էլ այն լրացրել է արտասահմանյանի հաշվին:

Նույնատիպ երշիկների որակը հաճախ տարբերվում է:

Ըստ ՀՀ օրենքի, արտադրողներն իրավունք ունեն պետական ստանդարտներով և տեխնիկական ուղեցույցով (ГОСТ и ТУ) պատրաստել իրենց երշիկի արտադրանքները և մսամթերքները: Խորհրդային ժամանակաշրջանում տեխնիկական կանոնակարգում պարզ և հստակ գրված էր, թե որ երշիկի մեջ որքան տավարի միս, խոզի միս, խոզի ճարպ, համեմունք պետք է լինի: Օրինակի համար՝ Հայաստանում, Կալինինգրադում թե Սախալինում պատրաստված Բժշկական երշիկը ըստ բաղադրությունը և համի նույնն էր:

Այժմ մեր արտադրողները արտադրում են հիմնականում տեխնիկական ուղեցույցով (ТУ):

Ստեղծում են իրենց բաղադրատոմսը, գրանցում համապատասխան մարմիններում և սկսում արտադրել: Եվ քանի որ նույն բժշկական երշիկի համար մի ընկերության տեխնիկական ուղեցույցը տարբերվում է մյուս ընկերության տեխնիկական ուղեցույցից, ապա տարբեր արտադրողների մոտ երշիկի համը տարբեր է լինում: Հետագայում մենք մտադիր ենք ընդհանուր հայտարարի բերել գոնե այն երշիկների բաղադրատոմսերը, որոնք բնակչության մեջ մեծ տարածում ունեն՝ ինչպիսիք են բժշկականը կամ սիրողականը:

սպառող՝ միջին տարիքի մարդկանց, արտահոսքը: Պահանջարկի նվազեցում զգալով՝ ձեռնարկությունը կրճատում է թողարկվող արտադրանքի քանակը:

Եթե տեղական սպառողական շուկան կրճատվում է, մենք մտադիր ենք ելք գտնել արտահանման միջոցով:

Հայկական արտադրողները վաղուց են երշիկի արտադրանք մատակարարում Վրաստան, Ռուսաստան, Թուրքմենստան: Անհրաժեշտ է մեծացնել մսամթերքների և երշիկի արտադրանքների արտահանման քանակը՝ արտադրանքի որակի լավացման և երշիկի արտադրանքների տարատեսակների լավացման հաշվին:

Միությունը նախատեսում է հաստատել գործնական կապեր ՀՀ վարչական և ֆիսկալ մարմինների հետ, և կդառնա գերազանց գործիք իր հետաքրքրությունների լոբբինգի համար:

Մսամթերքի արտադրողների միություն՝ ԻԱՄ

Տնօրեն՝ Արամայիս Բիլյան

«ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
«АССОЦИАЦИЯ ПРОИЗВОДИТЕЛЕЙ МЯСНЫХ ПРОДУКТОВ АРМЕНИИ»
«AN ASSOCIATION OF MEAT PRODUCERSIN ARMENIA»
01264419

Թարգմանություն ռուսերենից

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ

Արտադրողականության յուրաքանչյուր ուղղություն ներառում է կենդանիների մի քանի ցեղատեսակ:

Ցեղատեսակների և արտադրողականության համագործակցության հիմքում մսացու անասունների համար սահմանված են ստանդարտներ, ինչպես նաև մորթելու համար արտադրված ապրանքների նորմեր:

Ներկայումս ինձ շատ հետաքրքրում է խոշոր եղջերավոր անասունների, խոզերի և մանր եղջերավոր անասունների մորթը: Համաձայն տեխնոլոգիական հրահանգների՝ մեր հանրապետությունում 35-40 տարի կատարվում է անասունների մորթ (խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր, մանր եղջերավոր անասուններ): Անասունների մորթը կատարվում էր Երևանի, Կիրովականի, Կապանի մսակոմբինատներում: Ամենակարևորը, որ մսակոմբինատներում աշխատում էին Մոսկվայի, Լենինգրադի, Օդեսայի, Վորոնեժի ինստիտուտների շրջանավարտներ՝ մասնագետ-տեխնոլոգներ: Մսակոմբինատներում կատարվում էր անասունի ամբողջական վերամշակում և առանձին արտադրանքների արտադրություն: Մշակվում էին միս, ենթաարտադրանքներ, մորթի, մսառսկորային ալյուր, ժելատին, արյունին, ոսկորներ լուսաժելատինի համար: Աշխատում էին արիքային հումքի,

Ներկայումս Հայաստանի տարածքում գոյություն ունեն 10-12 մորթման արտադրամասեր, որոնք գրեթե չեն աշխատում: Իմ խնդիրն է նախարարության աշխատակիցների և երշիկի արտադրամասերի ղեկավարների հետ համատեղ կարգավորել մորթման արտադրամասերի աշխատանքները և երշիկի ու մսամթերային արտադրանքների որակի բարելավման հաշվին մեծացնել նրանց արտահանումը այլ երկրներ:

Մսամթերք արտադրողների միություն ԻԱՄ,

Տնօրեն՝ Արամայիս Բիլյան

«ԵՐԵՎԱՆԻ ՄՍԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
«АССОЦИАЦИЯ ПРОИЗВОДИТЕЛЕЙ МЯСНЫХ ПРОДУКТОВ АРМЕНИИ»
«AN ASSOCIATION OF MEAT PRODUCERSIN ARMENIA»
01264419
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ★ ԵՐԵՎԱՆ ★ ԱՍՈՒՅՍՆԵՐ ★ ՄԱՍ ★ ՄԹԵՐՔ ★ ՈՒՆԵՑՈՂ ★ ԱՆՁԱՆՑ
ASSOCIATION OF MEAT PRODUCERS OF REPUBLIC OF ARMENIA YEREVAN

Իրավաբանական անձի պետական գրանցման

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա988522

Իրավաբանական անձի անվանումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՍԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
Իրավաբանական անձանց միություն (առեւտրային)
(ԻԱՄ)

Գրանցված է Պետական ռեգիստրի
տարածքային բաժնի կողմից

Գրանցման համարը **290.151.838522**
Գրանցման ամսաթիվը **2014-12-09**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **49259440**
Հարկ վճարողի հաշվառման համար **01264419**
Ապահովադրի ծածկագիր **48158522**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առեւտրային**
Գործունեության ժամկետը **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"____" _____ 201__ թ.

Վկայականն ուղեկցվում է [illegible] հետ միասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԻԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՎԿԱՅԱԿԱՆ

ՆԵՐԴԻՐ 002

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա988522 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՍԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» (ԻԱՄ)**

Գտնվելու վայրը
Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը

Այլ տեղեկություններ**Կանոնադրության փոփոխության գրանցում:**
Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2015-03-12-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՉԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"12" 03 2015 թ.

Ներդիրս ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին